# Ազգ
Azg

19 ՅՈՒՆԻՍ 2007 ԵՐԵՔՇԱԲԹԻ 114 (3766)


## Մերձդնեստրը, Ղարաբաղը, Հարավային Օսիան ու Աբխազիան՝ Կոսովոյի նախադեպի կողմնակից

Չորս չճանաչված պետությունների՝ Մերձդնեստրի, Աբխազիայի, Հարավային Օսիայի եւ Լեռնային Ղարաբաղի արտգործնախարարությունները շաբաթ օրը Տիրասպոլում ստորագրել են «Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի (հետաքրքրական է, թե ինչ տրամաբանությամբ եւ ում նախաձեռնությամբ է Հայաստանը հայտնվել իր տարածքում հակամարտություն ունեցող երկրների շարքում-Ա.Հ.) եւ Ադրբեջանի տարածքներում հակամարտությունների խաղաղ եւ արդարացի կարգավորման սկզբունքների հռչակագիրը»: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին տեղեկացրել են Մերձդնեստրի արտաքին գործերի գերատեսչությունից, փաստաթղթում նշվել է, որ հակամարտությունները պետք է կարգավորվեն միայն խաղաղ քաղաքական միջոցներով, բոլոր կողմերի դիրքորոշման հարգանքի եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչման հիման վրա: Բացառվում են բանակցություններում ճնշման ռազմական, տեղեկատվական, տնտեսական, դիվանագիտական եւ այլ միջոցները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել հետկոնֆլիկտային, նաեւ ժողովուրդների անվտանգության եւ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներ եւ ապահովել հակամարտության կողմերի ստանձնած պարտավորությունների հստակ եւ պարտադիր կատարումը: Հռչակագրում նշված չորս չճանաչված պետությունները Կոսովոյի անկախացումը դիտում են որպես նախադեպ եւ գտնում, որ ինստիտուցիոնալ առումով ավելի հասուն վիճակում են, քան Կոսովոն:

Ա. Հ.

# Ղարաբաղի ժողովուրդը բարի, հոգատար եւ փորձառու նախագահ է ուզում

*ԼՂՀ նախագահական ընտրություններում հիմնական պայքարը երկուսի միջեւ է լինելու*

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ղարաբաղի ժողովուրդը նախընտրական շրջանում գրեթե նույն վիճակում է, ինչ հայաստանցիները նախընտրական իրավիճակներում: Այս համոզմանն է «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար, սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանը, ով օրեր առաջ Ղարաբաղից Հայաստան է եկել ԼՂՀ նախագահական ընտրությունների առիթով կատարած իր սոցիոլոգիական հարցման արդյունքներով, ինչը երեկ ներկայացրեց «Ուրբաթ» ակումբում: Հիշեցնենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահական ընտրություններում, որը կայանալու է հուլիսի 19-ին, մասնակցում են 5 հոգի՝ Արմեն Աբգարյանը, Վանիկ Ավանեսյանը, Հրանտ Մելքումյանը, ԼՂՀ փոխարտգործնախարար Մասիս Մայիլյանը եւ ԼՂՀ Ազգային անվտանգության ծառայության՝ այժմ արդեն նախկին ղեկավար Բակո Սահակյանը, ով էլ ընկալվում է իշխանությունների՝ մասնավորապես նախագահ Արկադի Ղուկասյանի նախընտրած թեկնածու:



Սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանի կարծիքով, Ղարաբաղում, ինչպես եւ Հայաստանում, բնակչության 30 տոկոսը ընտրություններով չի հետաքրքրվում: Ղարաբաղի նախագահական ընտրություններին մասնակից 5 թեկնածուներն էլ քարոզչության լավագույն միջոցը համարում են հեռուստատեսությունը, սակայն հայաստանյան հանրային հեռուստաընկերությանը, սոցիոլոգի հավաստմամբ, ղարաբաղցիները քիչ են վստահում եւ ավելի շատ հավատում են իրենց տեղական հեռուստաընկերությանը: Մյուս նմանությունը, որ հասցրել էր «հայտնագործել» սոցիոլոգը հետեւյալն է՝ իշխանության հավանական թեկնածուի համար զորեղ է ներկա նախագահի գործոնը:

Տես էջ 3

ՆԱԵՎ...

## Թվայնացնում են պետերբուրգյան ձեռագրեր

Թվայնացվում են Սանկտ Պետերբուրգի համալսարանում պահվող հին ձեռագրերն ու եզակի գրքերը: Ինչպես տեղեկացնում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, այս մասին հայտարարել է Պետերբուրգի համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի գրադարանի վարիչ Միլանա Ազարկինան: Թվայնացման նպատակով արդեն իսկ ձեռք է բերվել հատուկ սարքավորում, որի արժեքը կազմում է շուրջ 20 հզ. դոլար: Թվայնացման են ենթարկվելու արաբական եւ օսմանյան ձեռագրերը, հին ճապոներենով գրված գրքերը եւ եզակի այլ նմուշներ: Չի մանրամասնվում, սակայն, թե ինչ ընկերություն է զբաղվելու եզակի նմուշների թվայնացմամբ եւ ինչ պայմաններով:

Ամեն դեպքում, «**Ազգի**» ընթերցողները տեղյակ են, որ Մատենադարանի ձեռագրերի թվայնացման առնչությամբ պայմանագիր էր կնքվել, որով որոշակի առումով Միացյալ Նահանգներում կստեղծվեր Մատենադարանի «պատճենը»: Այդ պայմանագիրն այսօր «սառեցված է»:

# Երեւանի հասարակական տրանսպորտի երթուղային նոր ցանց՝ հուլիսի 1-ից

*Նախապատվությունը կտրվի ավտոբուսներին եւ ավտոբուսային երթուղիներին*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ակնհայտ է, որ Երեւանի հասարակական տրանսպորտի ներկայիս վիճակը բարելավման խիստ անհրաժեշտություն ունի: 15 տարի առաջ ստեղծված միկրոավտոբուսների գերակշռող առկայությամբ համակարգն այսօր այլեւս ի վիճակի չէ բավարարել պահանջարկը: Ինչ է սպասում մայրաքաղաքի բնակիչներին առաջիկայում, եւ կարո՞ղ են նրանք հույսեր փայփայել, որ մոտ ապագայում հասարակական տրանսպորտով աշխատանքի կամ տուն հասնելը կդադարի խնդրահարույց լինելուց:

Երեւանի քաղաքապետարանի «Երեւանտրանս» ՓԲԸ տնօրեն Կարեն Եղիազարյանի հետ մեր զրույցի ժամանակ նա անդրադարձավ այն ծրագրերին, որոնց իրականացումից ակնկալվում է, որ դրական փոփոխություններ կլինեն մայրաքաղաքի տրանսպորտային սպասարկման բնագավառում: Դրանցից հիմնականը ավտոբուսների ներկրումն է եւ միկրոավտոբուսների փոխարինումը միջին տեղատարողությամբ ավտոբուսներով: Միջին տարողության ավտոբուսներին նախապատվություն տալը նա բացատրեց մեր ճանապարհների թողունակությամբ, որոնք հարմար չեն մեծ տարողությամբ ավտոբուսների համար:

Մինչ այժմ Հայաստան են բերվել 181 «Բոգդան», 50 «Պազ» ավտոբուսներ, 42 տրոլեյբուս: Ներկայումս 45 ավտոբուսային երթուղի կա, որից սպասարկվում է 22-ը: Տարեկան նախատեսում են ներկրել միջին տարողությամբ 150 ավտոբուսներ:

«Միջին տարողությամբ մեկ ավտոբուսը փոխարինում է մոտ երեք միկրոավտոբուսի: Այսինքն, ներկայումս գործող արդեն 3200 միկրոավտոբուսներին մոտ 1000 ավտոբուս կարող է փոխարինել: Սակայն առաջիկայում մտադիր ենք պահպանել 1500 միկրոավտոբուս-700 ավտոբուս հարաբերակցությունը, 100 տրոլեյբուս ենք ցանկանում ներկրել մինչեւ 2011 թ.-ը՝ ներկայիս 50-ի փոխարեն, դրանց թիվը հասցնելով 150-ի, ինչպես նաեւ նպաստել մետրոյի զարգացմանը», հայտնեց Կարեն Եղիազարյանը: Այդ նպատակն ապահովելու համար ապրիլ ամսին պետական կառավարման ինստիտուտին Երեւանի քաղաքապետի հանձնարարականով պատվիրվել է ստեղծել երթուղային նոր ցանց:

Նոր ցանցով ակնկալվում է, որ երթուղիները պետք է վերադասավորվեն այնպես, որ 700 ավտոբուս ունենալու պարագայում, լինեն մոտ 65 ավտոբուսային երթուղիներ, իսկ միկրոավտոբուսները կկրճատվեն մոտ 1800-ով: Արդեն իսկ 88 միկրոավտոբուսներ դուրս են եկել ավտոբուսների գործունեության արդյունքում: Մետրոյին զուգահեռ երթուղիները կամ վերանալու են, կամ փոխելու ուղղությունները: Նոր ցանցը, որը գտնվում է ավարտման փուլում եւ պատրաստ կլինի հուլիսի 1-ին, մշակվում է հետեւյալ տրամաբանությամբ: Ենթադրենք, երբ ներկրվում է 40 ավտոբուս, նշվում է, որ տվյալ ուղղությամբ մեկ ավտոբուսային երթուղին սպասարկելու դեպքում դադարեցվում են մեկ, երկու կամ երեք այլ միկրոավտոբուսային երթուղիներ: Դա արվելու է, նկատի ունենալով միկրոավտոբուսային երթուղիները շահագործողների պայմանագրային ժամկետների ավարտը: 2007 թ.-ից մինչեւ 2011 թ.-ի ընթացքում տարբեր երթուղիների պայմանագրերի ժամկետներն ավարտվում են:

Տես էջ 2

## Իրանը մտահո՞գ է Գաբալայի կայանի համատեղ օգտագործմամբ

Իրանի արտգործնախարարության ներկայացուցիչ Մուհամեդ Ալի Հուսեյնին հանդիպել է Ադրբեջանի եւ Ռուսաստանի դեսպանների հետ՝ քննարկելու Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի ռուս-ամերիկյան համատեղ հավանական օգտագործման հարցը: «Ռեգնում» գործակալությունը տեղեկացնում է, որ Իրանի ներկայացուցիչը հայտարարել է, թե Ռուսաստանը չի պատրաստվում վնասել տարածաշրջանի անվտանգությանը:

## Կոնգրեսական Խիրոնոն կողմ է 106-րդ բանաձեւին

ԱՄՆ Հավայների Ալոխա տարածքի հայ համայնքը (ամեն տեղ հայ կա...) ողջունում է կոնգրեսական Մեզի Խիրոնոյին, որ հանդես է եկել Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման օգտին: Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի տեղեկացմամբ, կոնգրեսական Խիրոնոն ասիական ծագումով առաջին կին պատգամավորն է ԱՄՆ Կոնգրեսում: Հավայների հայ համայնքը բարձր է գնահատում կոնգրեսական Խիրոնոյի աջակցությունը 106-րդ բանաձեւին:

## ՎՈՒԱՄ գագաթաժողովի հիմնական հարցը Օդեսա-Բրոդի էներգանախագիծն է

Երեկ Բաքվում մեկնարկած ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) գագաթաժողովի հիմնական հարցը վերաբերում էր Օդեսա-Բրոդի էներգանախագծին, որի առնչությամբ պայմանավորվածություն էր ձեռք բերվել դեռեւ նախորդ գագաթաժողովին՝ նաեւ Լեհաստանի, Լիտվայի մասնակցությամբ: Այս անգամ այդ երկրների թվին ավելացել է նաեւ Ճապոնիան՝ Ալիեւի կրտսերի հրավերով: Ճապոնիան ներկայացնող երկրի արտգործնախարարին ընդունել է նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: ՎՈՒԱՄ շրջանակներում դիտորդի կարգավիճակից իր գոհունակությունն ու երկրի զարգացմանն աջակցությունն է հայտնել նաեւ ԱՄՆ պետքարտուղարի խորհրդականը՝ ընդգծելով, որ Միացյալ Նահանգները մտադրություն չունի միանալ ՎՈՒԱՄ-ին, քանի որ վերջինս տարածաշրջանային կազմակերպություն է:

# Նախագահ Քոչարյանի շնորհած առաջին հետմահու մրցանակը՝ Հրանտ Դինքին

*Նախագահի ամենամյա մրցանակներն այս տարի էլ գտան իրենց տերերին*

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Նախագահ Ռոբերտ Քոչարյանի նստավայրում երեկ տեղի ունեցավ հանրապետության նախագահի ամենամյա մրցանակների հանձնումը բնական գիտությունների, տեխնիկական գիտությունների, ֆիզիկայի, բժշկագիտության, արվեստի, գրականության, հումանիտար գիտությունների բնագավառների ներկայացուցիչներին: Հիշեցնենք, որ մի քանի տարի է նախագահի մրցանակ է սահմանվում նաեւ կինոյի, կերպարվեստի, գրականության եւ դասական երաժշտության բնագավառի երիտասարդ շնորհալիներին, իսկ 2005 թ. մրցանակ սահմանվել է նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ներդրում ունեցած անձանց համար: «Հայաստան» համահայկական հիմնադրամի շրջանակներում 2001 թ.-ից իրականացվող մրցանակահանձնումը ֆինանսավորվում է «Ռոբերտ Պողոսյան եւ որդիներ» հիմնադրամի կողմից:

«Նման կարգի մրցանակի արժեքը ոչ միայն գնահատականն է կատարած աշխատանքի, այլեւ համոզված եմ, որ պետք է առաջին հերթին խթան հանդիսանա հետագայում ավելի ակտիվ աշխատելու համար», հանդիսավոր արարողության ժամանակ ասաց հանրապետության նախագահը՝ միաժամանակ ափսոսանք հայտնելով, որ այս տարի լուրջ աշխատանքների հայտերի բացակայության պատճառով մրցանակներ չեն հանձնվում բնական գիտությունների, ֆիզիկայի բնագավառին:

Տես էջ 2

# Ծանուցում

PRICEWATERHOUSECOOPERS



PricewaterhouseCoopers is the world's largest professional services organization with over 160,000 people in more than 150 countries.

To support its strong business growth and in anticipation of opening an office in Yerevan, Armenia, **PricewaterhouseCoopers** is currently seeking the following professionals to join the firm at this very exciting stage:

**Audit professionals** - preferably with audit experience and enrolled in ACCA;

**Tax professionals** - experienced in all aspects of Armenian tax compliance and reporting;

**Administrative support staff** including Office Manager, IT specialist, accountant, receptionist, translator and driver.

All candidates must be proficient in Armenian, English and Russian;

Candidates interested in the above position are requested to send the letter of interest (with salary expectation) and CV to the following email: **yerevan.office@ge.pwc.com**

Only the short-listed candidates will be contacted for the further testing and interviews. No telephone enquiries will be accepted.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՃՁԲ-07/104 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար «ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան, Հրազդան, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ, Աշոցք, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքների նստավայրերի շենքերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման» աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2500 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» Էրեբունու մասնաճյուղ, «Բեջ-գալ» ՍՊԸ N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Ավետիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 12:00-ն:

VIVAcell
Ձեր ընտրանքը

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

*«Կ-Տելեկոմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «ՎիվաՍել») հայտարարում է հետվճարային ծառայություններից օգտվելու կանոնների փոփոխման մասին:*

Ս.թ. հունիսի 1-ից ծառայությունների համար սահմանվում են ընթացիկ պարտքի հետեւյալ ստանդարտ սահմանաչափերը.

| Կարգ | Ամսական սահմանաչափ (ՀՀ դրամ) |
|---|---|
| A-B | 5,000,000 |
| C | 400,000 |
| D | 200,000 |
| E | 100,000 |
| F | 50,000 |
| G | 35,000 |
| H | 20,000 |

Նշված սահմանաչափերը կիրառվում են ընթացիկ ամսվա համար հաշվարկված պարտքի գումարի նկատմամբ: Ռոումինգի ծառայությունների ակտիվացված լինելու դեպքում, աղյուսակում նշված սահմանափակման գումարին ավելացվում է ռոումինգի դեպոզիտի համար սահմանված գումարը:

Ամսական սահմանաչափերը չեն կարող օգտագործվել բաժանորդի կողմից որպես օգտագործման ծավալների եւ պարտքի վերահսկման գործիք:

Բաժանորդի հետ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, յուրաքանչյուր նոր բաժանորդագրությանը (գծին) շնորհվում է «F» կարգը: Բաժանորդին շնորհված կարգի փոփոխությունը, որպես կանոն, կատարվելու է հիմք ընդունելով բաժանորդի վարկային պատմությունը՝ համաձայն հետեւյալ աղյուսակի.

### Նոր կարգը

| Ընթացիկ կարգը | A-B | C | D | E | F | G | H |
|---|---|---|---|---|---|---|---|
| A-B | | Վերջին 4 ամսվա ընթացքում ամսական հաշիվների միջին գումարը չի գերազանցել 85,000 ՀՀ դրամը կամ կիրառվել է ելքային ծառայությունների կասեցում | | | | | |
| C | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման եւ ամսական հաշիվների գումարը միջինում գերազանցել է 100,000 ՀՀ դրամը | | Կիրառվել է ելքային ծառայությունների կասեցում | | | | |
| D | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման եւ ամսական հաշիվների գումարը . միջինում գերազանցել է 100,000 ՀՀ դրամը | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման | | Կիրառվել է ելքային ծառայությունների կասեցում | | | |
| E | | | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման | | Կիրառվել է ելքային ծառայությունների կասեցում | | |
| F | | | | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման | | Կիրառվել է ելքային ծառայությունների կասեցում | |
| G | | | | | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման | | Կիրառվել է ելքային ծառայությունների կասեցում |
| H | | | | | | Նախորդ 4 ամսվա ընթացքում վճարումները կատարվել են առանց ուշացման | |

ՎիվաՍելը սեփական հայեցողությամբ է որոշում սույն կանոնների կիրառման եղանակը: Բաժանորդի դիմումի համաձայն, ինչպես նաեւ ՎիվաՍելի սեփական նախաձեռնությամբ եւ հայեցողությամբ, բաժանորդագրությանը շնորհված կարգը կարող է վերանայվել՝ հաշվի առնելով պարտավորությունների կատարման ապահովման միջոցների առկայությունը (դեպոզիտ, բանկային երաշխիք կամ այլ) կամ բաժանորդի վարկարժեքի մասին վկայող այլ տեղեկություններ (տեղեկանք եկամուտների մասին, վարկային դասակարգում եւ այլն):

ՎիվաՍելն իրավունք ունի առանց որեւէ ծանուցման արգելափակել ելքային զանգերը՝ բաժանորդի կողմից օգտագործման ամսական սահմանաչափը գերազանցելու դեպքում: Վճարումներն ուշացնելու պատճառով մուտքային զանգերն արգելափակելու դեպքում, ծառայությունները վերականգնելու համար ՎիվաՍելը կարող է բաժանորդից պահանջել համալրել պարտավորությունների կատարման ապահովման լրացուցիչ միջոցներ:

*«Կ-Տելեկոմ» ՓԲ ընկերություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.06.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: